



## ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ (Աստվածաբանության դասախոս)

### ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ\*

#### ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

##### ՀԱՎԵԼՎԱԾ (ԺԶ 9—20)

Այն անձանոյ հեղինակը, որը ցանկացել է որպասի մի ավարտ տալ Մարկոսի ավետարանին, այս հատվածը շարադրել է ավելի ուշ շրջանում՝ օգտագործելով մյուս ավետարանները, մասնաւորապես Ղուկասի երկը: Հատվածում հայտնի են՝

— Համար 9—11. Հիսուսի երևումը Մարիամ Մագդաղենացուն (ըստ Հովհ. Ի 11—18).

— Համար 12—13. Էմմավուսի ճամփորդերի դրվագը (ըստ Ղուկ. ԻԴ 13—35).

— Համար 14—18. Հիսուսի երևումը տասնմեկ առաքյալներին Երուսաղեմում (ըստ Ղուկ. ԻԴ 36—49).

— Համար 19—20. Հիսուսի համբարձումը (ըստ Ղուկ. ԻԴ 50—53 և Գործ Առաքելոցի):

Ահա այդ հավելվածը.

ԺԶ 9 Առաջին միաշաբաթի առավոտյան հարություն առած լինելով՝ Հիսուս նախ երևաց Մարիամ Մագդաղենացուն, որից յոթը դեռ էր հանձել:

10 Սա գեաց ու պատմեց նրանց, որոնք Հիսուսի հետ էին և դեռևս սպում ու լաց էին լինում:

11 Երբ նրանք լսեցին, թե նա կենդանի է և երևացել է Մարիամին, չհավատացին:

12 Հետո նա այլ կերպարանքով երևաց նրանց, որոնք հանդ էին գնում:

- 13 Սրանք ել եկան ու պատմեցին որիշերի. բայց սրանց ել չհավատացին:
- 14 Հետո, մինչ Տասնմեկը սեղան էին հատել, նրանց երևաց և դատապարտեց նրանց անհավատությունն ու խատարտությունը, որովհետև չէին բավարացել նրանց, որոնց ինքը երեւացել էր՝ մեռեներից հարություն առած:
- 15 Եվ ասաց նրանց. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցե՛ք Ավետարանը բոլոր արարածներին»:
- 16 Ով հավատա և մկրտվի, պիտի փըրկվի, և ով չհավատա, պիտի դատապարտվի:
- 17 Սրանք են նշանները, որոնք պիտի ուղեցեն նրանց, ովքեր հավատում են. ին անունով դներ պիտի հանեն, լեզունքը պիտի խոսեն.
- 18 Իրենց ձեռքերին օձեր պիտի բռնեն, և եթե մահացու թույն խմեն, դա նրանց չպիտի վճասի. հիվանդների վոր ձեռք պիտի դնեն և բժշկեն»:
- 19 Եվ ինքը Տեր Հիսուս, նրանց հետ խոսեցուց հետո, երկինք համբարձավ և հատեց Հոր աշ կողմը:
- 20 Իսկ նրանք ելան ու քարոզեցին ամբողջ աշխարհում՝ Տիրոջ գործակությամբ. և իրենց ուղեկցող բոլոր նշաններով հաստատում էին Խոսքը:

#### ԲԱՌԱՑԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՌՈՒՆԵՐԻ

Արիաթար. Նոմիի հրեական տաճարի քահանա Դավթի ծամանակաշրջանում: Հիսուս նրա անունը տալիս է շաբաթ օրով պոկված հասկերի դրվագում (Մարկ. Բ 26). սակայն աստվածա-

\* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թվականի № Ն Բ—ԺԲ-ից և 1987 թվականի № Ա—Զ-ից:

Հնական դրվագը, որին նա ակնարկում է, իրականում տեղի էր ունեցել Աքիաթարի հոր՝ Աքիմելեքի հետ (ըստ Ա. Սամ. Ի. Ա. 2—7):

**Աքրահամ.** Կես-թափառաշրջիկ մի ցեղի տոհմապետը, որը Աստվածաշնչում համարվում է հրեա ժողովոյի և համայն հավատացյալների հայության: Ապրել է Քրիստոսից առաջ 1800-ական թվականներին: Աստուծ հանդեպ իր հավատարմության որպես ապացույց, ևս հանձն առավ զոհաբերել իր հասակ որդուն, սակայն Աստված կասեցրեց նրա արարքը (ըստ Ծննդ. Ի. Բ. 1—19):

**Աքիմելեք.** Նորի հրեական տաճարի քահանա, Աքիաթարի հայրը: Նա էր, որ քոլլատրեց Դավթին ուտել առաջավորության հացը (ըստ Ա. Սամ. Ի. Ա. 2—7), մինչդեռ Մարկոսը, սխալմամբ, դա վերագրում է Աքիաթարին (Մարկ. Բ. 26):

**Անդրեաս.** Տասմերկու առաքյալներից մեկը, Սիմոն Պետրոսի եղբայրը (Մարկ. Գ. 18): Մարկոսի ավետարանի սկզբում իր եղբոր հետ միաժամանակ նաև կանչվեց Հիսուս կողմից (Մարկ. Ա. 16): Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ միասին նաև տաճարի կործանման մասին Հիսուս ճառն ունկնդրողներից մեկը եղավ (Մարկ. Ժ. 3):

**Անտիոքոս Եպիփանոս.** Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությանը հաջորդած երեք հարատություններից մեկի՝ Սելիվան հարատության թագավոր: Նա փորձեց հրեա ժողովոյին պարտադրել հունա-հոռոմեական հեթանոսական կորուսը: Դրա ամենացայտուն արտահայտությունը եղավ, եթե նա հրամայեց Երուաղեմի տաճարում կանգնեցնել օլիմպիական Յուպիտերի արձանը (167 թվականին Քրիստոսից առաջ): Նրա արարքը սկզբնադրյուրը հանդիսացավ Մակարայեցվոց հայտնի ապրատամբության:

**Աքիմաթիա.** Քաղաք Հրեաստանում, Երուսաղեմից մոտ քառասուն կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք. Հովհանք Առիմաթիացու ծննդավայրը (Մարկ. Ժ. 43):

**Բաաղ.** Փոթորկի աստվածը քանանական և սիրիական հին կրոնում: Հին Կտակարանի մարգարեները ուժմորեն հակադրվեցին նրան իսրայելացիների վրա նրա ունեցած մեծ հմայքի պատճռով: Նրա անոնքը խորհրդանշան է դարձել

ճշմարիտ Աստծուն հակադրվող մի աստվածության:

**Բաբելոն.** Հին մայրաքաղաքը մի մեծ կայսրության, որը ընդգրկում էր Աերկա հրաքի սահմանները, Եփրատի հովտում: Բազմաթիվ հրեաներ աքսորվեցին այնտեղ Նարուգոդոնոսոր թագավորի կողմից՝ սկսած 590 թվականից նախքան Քրիստոս: Նրանցից շատերը, 538 թվականից սկսած, վերադարձան իրենց հայրենիքը Կյուրոսի կողմից հրապարակված մի հրովարտակի շրմորհիվ, որով արտոնվում էր նրանց վերադարձը:

**Բամբա.** Փիլիպպան Կեսարիա քաղաքի ներկա անունը:

**Բարաբբա.** Պատմիններին անհայտ մի անձնավորություն, որի մասին, սակայն, նոյն վկայությունն են բերում չորս ավետարանները: Նա ազատ արձակվեց ամբոխի պահանջով, մինչդեռ Պիդատոսն առաջարկում էր բաց թողնել Հիսուսին (Մարկ. Ժ. 7):

**Բարբողոնեսոս.** Հիսուսի տասներկու առաքյալներից մեկը (Մարկ. Գ. 18), որը քրիստոնեություն քարոզեց և նահատակվեց Հայաստանում:

**Բարտիմեոս.** Երթովի կույր մուրացիկը, որը բժշկվեց Հիսուսի կողմից (Մարկ. Ժ. 46):

**Բեեղեգերու.** Սատանայի բազմաթիվ անուններից մեկը, դեկրի հշանար: Բեեղեգերու նշանակում է «հշանան Բաաղ» (Մարկ. Գ. 22):

**Բեթամենա.** Գյուղ, որ գտնվում էր Երուսաղեմից երեք կիլոմետր դեպի արևելք, Զիթենյաց լեռան մյուս կողմը: Թվում է, թե Հիսուս այնտեղ էր անցկացնում գիշերները Երուսաղեմում իր կեցության ժամանակ (Մարկ. Ժ. 11): Այդ գործում էր, որ նա ճաշի նստեց Բորոտ Սիմոնի տանը (Մարկ. Ժ. 3):

**Բեթփագե.** Բնակավայր Երուսաղեմին մոտիկ, Զիթենյաց լեռան հարավային լանջին: Այստեղից է, որ Հիսուս կամակերպեց իր մոտքը դեպի Սուրբ Քաղաք (Մարկ. Ժ. 1):

**Բեթայիդա.** Տիբերական լճի հյուսիս-արեւելյան ափին հաստատված մի քաղաք, հեթանոսների երկրու, Գալիլիայի սահմանագլխին: «Բեթայիդա» նշանակում է «ձկնորսատուն»: Քաղաքի բնակչության մի մասը բաղկացած պետք է լիներ հրեաներից, որովհետև Հովհանների ավետարանում այդ քաղաքը նշված է որպես Փիլիպպոսի, Անդրեասի և Պետրոսի ծննդավայրը

(Հովհ. Ա. 44): Սակայն Մարկոսն այն ներկայացնում է որպես հեթանոսական քաղաք:

**Բերիա.** Հորդանան գետի արևելյան ափին, Անդրբորդանում գտնվող մի շրջան, որ Քրիստոսի ժամանակ բնակեցված էր հեթանոսներով:

**Գալիխա.** Պատեստինի հյուսիսում գտնվող հրեական գավառ: Լինելով նվազ լեռնային մի շրջան, քան Հուդայի երկիրը, և գտնվելով Երուսաղեմից շորջ հարյուր կիլոմետր հեռու, այն հանդիսանում էր հայորդակցական քազմաթիվ ճանապարհների հանգույց և այդ պատճուղով էլ Երուսաղեմի հրեա բռնակչության կողմից դիտվում էր որպես կաւածելի մի շրջան հեթանոսների ներքափական համար: Գալիխայում էր, որ գլխավորապես տեղի ունեցավ Հիսուսի քարոզությունը:

**Գալիխայի (ծով).** Լիճ Հորդանան գետի վերին հոսանքի վրա, որ ստվորաբար կոչվում է «Տիբերական լիճ» կամ «Գենենասարեթի լիճ»: Մարկոսն ընդհանրապես այն անվանում է «Գալիխայի ծով» կամ նույնիսկ կրօնտված ձևով՝ «ծով»:

**Գերսեմանի.** Երուսաղեմի շրջակալքում, Զիթենյաց լեռան ստորոտին գտնվող մի վայր, որտեղ Հիսուս աղորեց Ավագ հինգաբրի օրը, երեկոյան, ձերբակալվելոց առաջ:

**Գերմեն.** Երուսաղեմի հարավային մասում գտնվող մի խորունկ ձոր, որտեղ այդում էին աղբակույտերը: Այս անունը խորհրդանշան էր կործանման և կորսայան:

**Գենենասարեթ.** Փոքր քաղաք Տիբերական լճի արևմտյան ափին: Այս քաղաքի անունով լիճը կոչվում էր նաև Գենենասարեթի լիճ, իսկ երեմն է՝ Գալիխայի ծով (Մարկ. Զ. 53):

**Գերգետա.** Դեկապոլիսի տասը քաղաքներից մեկի անունը: Այն գտնվում էր Տիբերական լճից շորջ հիսուն կիլոմետր հեռու դեպի հարավ-արևելք: Քաղաքի բնակչները՝ գերգետացիները, հեթանուներ էին: Այսօր այդ քաղաքը կոչվում է Զերաշ և գտնվում է Հորդանանում:

**Գողգոթա.** Փոքր քարձրավանդակ, որ գտնվում է Երուսաղեմի պարիսպներից դորս, քաղաքի դարպասներից մեկին մոտիկ: «Գողգոթա» հշանակում է «կառափնատեղ», «կառափնարան»: Այստեղ էր գործադրվում խաչելության

դատապարտված մարդկանց մահապատճերը:

**Գործ առաքելոց.** Նոր Կտակարանի հինգգերորդ գիրքը, որտեղ տրված է Քրիստոսի Եկեղեցու սկզբանավորման պատմությունը՝ սկսած Համբարձումից մինչև Պողոսի գալուստը Հռոմ: Գրքի հեղինակն է Ղուկաս ավետարամբէչը, որն իր գործը ներկայացնում է որպես իր ավետարանի շարունակությունը:

**Դաղմանունա.** Մարկոսի ավետարանի Հ գլուխ 10-րդ համարում հիշատակված անձանոթ բնակավայր: Գուցե սա երեւակայական մի բնակավայր է, որի անունը ավելի շուտ կարող էր ունենալ խորհրդանշական հմաստ:

**Դանիել.** Հին Կտակարանի ուշ շրջանի գրքերից մեկի անունը: Այն պարունակում է հիմարքանչ հայտնություններ, որոնք սահմանված էին հուսադրելու հարյելացից ժողովրդին ուժեղ հալածանքներից մեկի ժամանակ, որը տեղի ունեցավ Քրիստոսից առաջ երկու դարում:

**Դավիթ.** Խորայելի թագավոր, որ իշխաց շորջ քառասուն տարի (1010 թվականից մինչև 970 թվականը նախքան Քրիստոս): Դավիթը ինեւալական թագավորի կերպար է: Մեսիան հաճախ կոչվել է «Որդի Դավիթ» (Մարկ. Ժ 47–48, Ժ 35):

**Դեկապոլիս.** Հորդանանի արևելքում գտնվող նահանգ, որ առաջացել է տասը քաղաքների համադաշնակցությունից, որոնց թվում էր նաև Գերգետան:

**Եգիպտոս.** Երկիր, որը խորայելական քաղաքիվ ցեղեր բնակվեցին Քրիստոսից առաջ երկրորդ հազարամյակի կեսերին: Նրանք այնտեղից դուրս եկան մոտավորապես 1250–1200 թվականներին Մովսեսի առաջնորդությամբ: Այդ գաղթը, որ կոչվում է Ելք, համարվում է խորայելացից ժողովրդի հիմնադրումը հաստատող եղելություն:

**Եղեն.** Ծննդոց գրքում այն անունն է տրված այն երկրին, որը Աստված բնակեցրեց առաջին մարդուն (Ըստ Ծննդ. Բ 8):

**Եզեկիել.** Հին Կտակարանի մեծ մարգարեներից մեկը, որը Քրիստոսից առաջ վեցերորդ դարում քարոզում էր Բարեկոնում հրեաների գերության ժամանակ:

**Ելք.** Այս անունով է կոչվում զանգվածային այն գաղթը, երբ խորայելական քազմաքիվ ցեղեր Մովսեսի առաջնորդությամբ ճանապարհ ընկան Եգիպ-

տոսից դեպի Սուրբ Երկիր Քրիստոսից առաջ շուրջ 1250—1200 թվականներին: Աստվածաշնչի երկրորդ գիրքը, որտեղ խոսվում է այս եղանակով մասին, կոչվում է Եփոց գիրք:

**Եղիա.** Հին Կտակարանի ամենահին մարգարեներից մեկը (իններորդ դար Քրիստոսից առաջ), որը համարվել է Աստուծու կողմից ընտրված տիխար մարդ: Հրեական ավանդությունն ասում է, որ առ իր կյանքի վերջում տարվեց երկինք (Բ Թագավորաց Բ 11), որտեղից և պիտի վերադառնա որպես նախակարապետ Մեսիայի (Մադաքիա Գ 23—24): Աստվածաշնչական որոշ գրվածքներ համարում են, որ առ վերադարձել է հանձին Հովհաննես Մկրտչի:

**Եղիա.** Եղիա մարգարենի աշակերտը և հաշորդը (իններորդ դար Քրիստոսից առաջ):

**Եսայի.** Երուապելսի մարգարեն, որ իր գործութեանում սկսեց 740 թվականին Քրիստոսից առաջ: Այն գիրքը, որ ծանոթ է նրա անունով, Հին Կտակարանի մարգարեական գրվածքների մեջ ամենածավալուն ժողովածուն է, որի երկրորդ մասը (40—55 գլուխները) և երրորդը (56—68 գլուխները) Եսայուն շեն պատկանում, այլ՝ ավելի ուշ շրջանի մարգարեներին, որոնք մասամբ ներշնչվել են նրա պատճամից:

**Երեմիա.** Հին Կտակարանի մեծ մարգարեներից մեկը, որը քարոզում էր Երուապելսում այն տարիներին, որոնք նախորդեցին այդ քաղաքի անկմանը (587 թ. Անխրան Քրիստոս):

**Երիքով.** Օագիս Հորդանան գետի արևմբրդական ափին, Մեռյալ ծովին մոտիկ: Երիքով աշխարհի ամենացածր քաղաքն է (300 մետր ծովի մակերևույթից մերք): Այն եղավ Հիսուսի վերջին հանգրվանը Երուապելս մտնելուց առաջ (Մարկ. Ժ 46):

**Երկրորդումն Օրինաց.** Հին Կտակարանի հիմքերորդ գիրքը, որը հիմնականուն Մովկենին վերագրված ճառերի մի շարք է և կոչված է իսրայելացիներին հիշեցնելով աստվածային Օրենքի բովանդակությունը:

**Երուապեն.** Հրեական աշխարհի կենտրոնը՝ սկսած Դավիթ թագավորի շրջանից (շուրջ 1000 թ. Անխրան Քրիստոս): Հայ Մարկոսի ավետարանի, Հիսուս այս քաղաքը եկավ միայն իր կյանքի վերջնին շրջանին՝ այնտեղ մասնակություն:

**Եփրայիմ.** Խարայելի տասներկու ցեղերից մեկը, որը կարևոր տեղ էր գրավում իր թվով և զբաղեցրած հողատարածությամբ: Մարգարեական գրվածքներում այս անունը հաճախ գործածված է որպես տեղանուն՝ ցոյց տպու համար Հրեաստանի ամբողջ կենտրոնական և հյուսիսային մասը:

**Զատիկ.** Հրեական տոռ՝ հիշատակելու համար իսրայելացիների ելքը Եգիպտոսից, Մովկենի ժամանակ: Այս տոռը նշվում էր կայուն մի օր՝ հրեական նիսան ամսի 15-ին և սկսվում էր ընտանեկան մի խնջույքով, որը տեղի էր ունենում նոյն ամսի 14-ի երեկոյան: Այդ խնջույքի և նրան հաջորդող տոնախմբությունների ութ օրերի ընթացքում ուսում էին միայն բաղարջ՝ անթրթիմոր հաց:

**Զաքարիա.** Հին Կտակարանի տասներկու փոքր մարգարեների նախավերջինը: Նրա անունով կա մարգարեական մի ժողովածու, որի երկրորդ մասում (9—14 գլուխներում) շեշտված է Մեսիայի գալստյան գաղափարը:

**Զեբենեոս.** Հակոբոս և Հովհաննես առաքյալների հայրը (Մարկ. Ա. 19—20):

**Թաքոր.** Լեռ Գալիլիայում, Նազարեթին մոտիկ: Ունի 588 մետր բարձրություն: Հայ քրիստոնեական ավանդության, այս լեռան վրա է տեղի ունեցել Հիսուսի այլակերպությունը:

**Թագավորաց.** Հին Կտակարանում երկու գրքեր կոչվում են Թագավորաց գրքեր: Դրանք Սամուելի գրքերի շարունակությունն են կազմում և պարունակում են իսրայելական թագավորությունների պատմությունը Դավիթի մահից հետո:

**Թաղեսոս.** Տասներկու առաքյալներից մեկը (Մարկ. Գ 18): Ղուկասի ավետարանում նա հանդես է գալիս Հուդա անունով (Ծառ Ղուկ. Գ 18):

**Թովմաս.** Տասներկու առաքյալներից մեկը (Մարկ. Գ 18):

**Թորա.** Երրայեցերեն բառ, որ ցոյց է տալիս այս Օրենքը, որ Սատված տվեց Խարայելին Մովկենի միջոցով: Սատվածաշնչի հինգ գրքեր բովանդակում են այդ Օրենքը. դրանք են՝ Մեռնեք, Ելք, Ղատականք, Թիվք և Երկրորդումն Օրինաց:

**Իդումե.** Նահանգ Պաղեստինում, որ գրտնվում է Հուդայի երկրի հարավային մասում, Մեռյալ ծովից դեպի արևելք: Հին Կտակարանում այս նահանգը կոչվում է Եղում:

**Իսահակ.** Աքրահամի որդին:

**Խարայել.** Աստուծո կողմից Հակոբին տըր-ված խորհրդանշական անուն, որ նշանակում է՝ «Թող Աստված ոժեղ երեւ-վա»: Հետագայում այն դարձավ հրեա ժողովրդի անունը: Այն ժամանակա-շրջանում, եթե հրեաների երկիրը բա-ժանված էր երկու թագավորություն-ների, Խարայել անունը տրվում էր հյու-սիսի թագավորությանը, մինչդեռ հա-րավային թագավորությունը կոչվում էր Հորդայի թագավորություն:

**ՄԱՆԵՐԸ (գիրք).** Հին Կտակարանի առա-շին գիրքը: Այն պարունակում է ծա-վալով անհավասար երկու մասեր. ա-ռաջին մասը վերաբերում է աշխարհի ծագմանը (1—11 գլուխներ), երկրոր-դի՝ հրեա ժողովրդի նախանձերին (12—50 գլուխներ):

**Կարմիր (ծով).** Այն, ինչ սովորաբար կո-չում են «անցք Կարմիր ծովից», ջրե-րի քաշվելու հետևանքով առաջացած մի ցամաքահատված է, որտեղով ան-ցան Եգիպտոսից դուրս եկնող խրայե-լական ցեղերը ների սկզբին: Սուրբ Գրքի երրայական բնագիրը ավելի շուտ տալիս է «Եղեգների ծով» անո-նը:

**Կափառնայում.** Քաղաք Գալիլիայում, Տի-բերական լճի հյուսիս-արևմտյան ա-փին: Այստեղ էր գտնվում Պետրոսի և Անդրեասի տունը: Հիսուս հաճախ էր գալիս այս քաղաքը: Այստեղ էր, որ նա իր քարոզությամբ և կատարած հրաշքներով հաջողություններ ունեցավ սկզբնական շրջանում:

**Կեղրոս.** Երուսաղեմի արևելյան մասում գտնվող խոր հովիտ, որ քաղաքը բա-ժանում է Զիթենեաց լեռնից:

**Կեսար.** Տիտոս, որ տրվում էր հռոմայնի կայսրերին և ոչ թե միայն կայսրության հիմնադրին: Հիսուսի քարոզության ժամանակաշրջանում այս տիտոսն ուներ Տիբերիոս կայսրը (Մ. Թ. 14—37):

**Կեսարիա.** Պաղեստինում այս անունով էին կոչվում երկու քաղաքներ.

— Կեսարիա, որը նավահանգիստ էր Մի-ջերականի ափին և նատաքայրը հոռայնեցի փոխարքաների:

— Փիլիպպան Կեսարիա, որը գտնվում էր Հորդանան գետի ակունքին մոտիկ, ոչ հրեական տերիտորիայում: Հատ Մաթեոսի և Մարկոսի ավետարանների, այս կողմերում էր, որ տեղի ունեցավ Պետրոսի խոստովանությունը (Մարկ. Ղ 27):

**Կյուրենիա.** Հոռմեական կայսրության կա-

րեոր քաղաքներից մեկը, որը Սիրենա-յիկայի հոռմեական նախանձի գլխավոր կենտրոնն էր: Այն գտնվում է այժմ-յան Լիբրիայում: Հնում այստեղ գոյություն ուներ հրեական կարերը մի գա-ղութ, և վստահաբար այստեղից էր ե-կել Սիմոն Կյուրենացին (Մարկ. Ժ 21):

**Կողոսիա.** Փոքր Ասիայի քաղաքներից մե-կը, որտեղ մեր թվագրության վաղ ժամանակներում գոյություն է ունեցել քրիստոնեական մի համայնք: Սուրբ Պողոսը չէր այցելել այս քաղաքը, սա-կան իր կյանքի վերջին շրջանում նա գրեց կողոսացի քրիստոնյաներին ուղ-ղված մի թույլ:

**Կորնթոս.** Մայրաքաղաք, որ մեր թվագրության սկզբին Հունաստանի ամենա-բազմամարդ քաղաքն է եղել: Պողոս առաքյալն այստեղ հիմնեց քրիստո-նեական մի համայնք և երկար տարի-ներ ապրեց այս քաղաքում: Նա բա-զում թղթակցություններ ունեցավ Կո-րնթոսի Եկեղեցու հետ: Նոր Կտակա-րանում կան Պողոսից երկու թղթեր՝ ուղղված կորնթացիներին:

**Հակոբ.** Խահակի որդին: Խահակն ինքը որդին էր Սքրահամի: Հետևաբար Հա-կոբը, ժամանակագրական կարգով, հրեա ժողովրդի նախանձերից երրորդն էր: Նրա զավակներից են առաջացել Խարայելի տասներկու ցեղերը:

**Հակոբոս.** Հիսուսի առաքյալներից երկուսի անունը.

— Զերենեոսի որդի Հակոբոսը՝ Հովհան-նեսի եղբայրը, որի անունը տասներկու առաքյալների ցուցակում երկրորդն է (Մարկ. Ժ 9. 17): Նա մաս է կազմում այն եղակին (Պետրոս, Հակոբոս, Հովհաննես), որին Հիսուս շատ ան-գամ իր հետ էր տանում:

— Ալիկեոսի որդի Հակոբոսը (Մարկ. Գ 18), որին թերևս պետք է նոյնացնել Հովհանեսի եղբայր Կրտսեր Հակոբոսի հետ (Մարկ. Ժ 40), որի մայրը կոչ-վում էր Մարիամ և որին Մարկոսը դնում է Հիսուսի եղբայրների ցուցա-կում (տես Մարկ. Ղ 3):

**Հայրոս.** Հրեա ժողովրդապետներից մեկը, որի աղջկան Հիսուս կենդանացրեց (Մարկ. Ե 21—43):

**Հեղարեկ.** Խարայելացի Ախար թագավորի (իններորդ դար նախքան Քրիստոս) կինը: Ախարը այն թագավորն էր, որը հայտնի դարձավ հյունով, որ արտո-նեց կուռքերի պաշտամունքը և անհնա-հալածեց Աստուծո ճշմարիտ մարգա-

թեներին: 17-րդ դարի ֆրանսիացի դասական թատերագիր Ռուսինը իր «Արտայիա» ողբերգության մեջ պատկերել է Հեղաքելի կերպարը:

**Հերովնե.** Բարձր գագաթ Լիբանանի լեռնաշխթայի հարավային ծայրամասում (2814 մետր): Նրա ձյունապատ ուրվագիծը երևում է Գալիլիայի գորեթե բրոլոր կողմերից:

**Հերովդես.** Այս անունով կոչվում են բազմաթիվ թագավորներ, որոնցից երկուսի անունը տրված է ավետարաններում.

— **Մեծ Հերովդեսը,** որը Քրիստոսից առաջ 37—4 թվականներին իշխեց ամբողջ Պաղեստինում: Նա հոչակավոր դարձավ իր ձեռնարկած բազմաթիվ կառուցումներով և իր վարագությամբ: Նա թագավոր էր Հիսուսի մանկության շրջանում և, ըստ Սուրբ Մաթևոսի վկայության, նա էր, որ կազմակերպեց անմեղ մանուկների կոտորածը (Մաթ. Բ 13—18):

— **Հերովդես Անտիպասը,** որը որդին էր Մեծ Հերովդեսի: Նրա իշխանությունը տարածվում էր միայն Պաղեստինի հյուսիսային համանգների վրա, մասնավորապես Գալիլիայում, Քրիստոսից առաջ 4 թվականից մինչև մեր թվագրության 39 թվականը: Նա մահվան դատապարտեց Հովհաննես Մկրտչին, տեղեկացավ Հիսուսի քարոզության մասին և, ըստ Ղուկաս ավետարանչի վկայության, միջամտեց նոյնիսկ նրա դատավարության ժամանակ (Ղուկ. Ի. 6—12): «Հերովդեսականներ» են կոչվում նրա կողմնակիցներն ու ընդհանուրապես այն հրեաները, որոնք պաշտպան կանգնեցին Հերովդեսների դինատիային: Հերովդես Անտիպասը միակն է Հերովդեսների մեջ, որի մասին հիշատակություն կա Մարկոսի ավետարանում:

**Հերովդիա.** Մեծն Հերովդեսի թոռնութին: Սա նախ ամուսնացած իր հորեղբար Փիլիպոսի՝ Մեծն Հերովդեսի որդուն ննտ, իսկ երկրորդ անգամ՝ Մեծն Հերովդեսի մյուս որդու՝ Հերովդես Անտիպասի հետ, որը նոյնպես նրա հորեղբար էր: Իր այդ ապօրինի արարքի համար մեղադրվելով Հովհաննես Մկրտչից՝ նա այնպես արեց, որ գիսատեն նրան (Մաթ. Ջ 17—29):

**Հիլե.** Քրիստոսին ժամանակակից փարիսեցի հոչակավոր ուարքի, որ հայտնի էր իր ազատամիտ հաշաքըներով և հաճախ հակադրվում էր ուարքի Շամային (տես Մաթ. Ժ 1—12):

**Հովհաննես.** Զերեկելուի որդին՝ Հակոբոսի եղբայրը և տասներկու առաքյալներից մեկը (Մաթ. Գ 17): Մարկոսի ավետարանում շատ է հիշատակված նրա անունը Պետրոսի և Հակոբոսի հետ: Քրիստոնեական ավանդությունը նրան համարում է հեղինակ չորրորդ ավետարանի, որ հավանաբար գրվել է Եվետոսում 90 թվականի շուրջ:

**Հովհաննես Մկրտիչ.** Հրեա քարոզիչ: Ապրել է մեր թվագրության սկզբին: Ավետարանիցները նրան ներկայացնում են որպես Հիսուսի առաջից գնացող անձ, անհակարապես: «Մկրտիչ» բառն առաջացել է կրոնական այն հոսանքից, որին պատկանում էր նա: Այդ հոսանքում ստվորություն կար կատարելու մկրտության հատուկ մի ծես ջրի մեջ թաթախման միջոցով: Ըստ Սուրբ Մարկոսի, Հովհաննեսն այդ ծեսը կատարեց Հիսուսի վրա (Մաթ. Ա 9) և քիչ անց գլխատվեց Հերովդես Անտիպաս թագավորի հրամանով (Մաթ. Ջ 17—29):

**Հովե.** Մարկոսի ավետարանում երեք անգամ հիշատակված անձ: Նա Կրտսեր Հակոբոսի եղբայրն էր (Մաթ. Ժ 40) և ուն Մարիամի որդին (Մաթ. Ժ 47): Մարկոսը նրա անունը տախս է Հիսուսի եղբայրների ցուցակում (տես Մաթ. Ջ 3):

**Հովեկի.** Կույս Մարիամի ամուսինը և Հիսուսին սեղուղ հայրը: Նրա անունը չկա Մարկոսի ավետարանում:

**Հովեկի Արիմաթիացի.** Այն մարդը, որ Պիդատոսի մոտ գնաց և նրանից խընդուց, որ Հիսուսի մարմինը իրեն հանձնվի (Մաթ. Ժ 43):

**Հորդանան.** Գետ Պաղեստինում, որի հոսանքը սկիզբ է առնում Անտի-Լիբանանից, Կտրում-անցնում է Տիբերական լիճը և թափվում Մելոյալ ծով: Հովհաննես Մկրտիչը այս գետի ջրերում էր կատարում մկրտությունը: Հորդանանի արևելյան ափը կամ Անդրբիրդանանը մաս չի կազմում ավանդական հրեական տերիտորիային:

**Հուդա.** Մարկոսը հիշատակում է այս անունը Հիսուսի եղբայրների ցուցակում (տես Մաթ. Ջ 3): Խորայելի տասներկուու ցեղերից մեկի անունը: Այն ժամանակաշրջանում, երբ հրեատանը բաժանվեց երկու թագավորությունների, Հուդայի թագավորությունը, որի մայութագաք Երուսաղեմն էր, զբաղեցնում էր երկրի հարավային մասը, իսկ

հյուսիսայինը կոչվում էր Խարայելի թագավորություն:

**Հուդայի երկիր.** Պաղեստինի հարավում գտնվող լեռնային մի համանգ, որի կենտրոնն էր Երուսաղեմը:

**Հուդա Խսկարիութացի.** Հիսուսի տասներկու առաքյալներից մեկը, որը մատնեց իր Տիրոջը (Մարկ. Գ 19):

**Հոռմ.** Հայտնի չէ, թե երբ և ում կողմից քրիստոնեությունը մուտք գործեց այս քաղաքը, որտեղ քրիստոնյաներն արդեն կարսոր մի համայնք էին կազմում մեր թվագրության 57—58 թվականներին, երբ Պողոս առաքյալը գործ հոռմայնցներին ուղղված իր թուղթը: Այստեղ համատակվեցին Սուրբ Պետրոսն ու Սուրբ Պողոսը 84 կամ 67 թվականին: Մարկոսն այստեղ գործ իր ավետարանը 65 թվականի շորջ:

**Զիթենցաց** (լեռ). Գտնվում է Երուսաղեմի արևելքում և իշխում է քաղաքի վրա, որից բաժանված է Կեդրոնի ձորով:

**Ղաֆ.** Մաքսավոր. Ալփեոսի որդին, որին Հիսուս կանչեց Կափառնայում, որպեսզի հետոնի իրեն (Մարկ. Բ 14): Նրա անոնը չի տրված տասներկու առաքյալների ցուցակում (Մարկ. Գ 18—19), բայց թերևս կարելի է նրան նույնացնել Մաքսոս առաքյալի հետ (ըստ Սաթ. Թ 19):

**Ղտտական.** Հին Կտակարանի գործերից երրորդը՝ բաղկացած գլխավորապես հրեական Օրենքին մաս կազմող պատվիրաններից:

**Ղոկաս.** Ծնունդով հեթանոս, որ հետո քրիստոնեությունն ընդունեց և դարձավ Սուրբ Պողոսի գործակիցը: Նա հեղանակն է երրորդ ավետարանի և «Գործ առաքելոց»-ի: Ենթադրվում է, որ նա այդ գործերը գործել է մեր թվագրության 80 կամ 85 թվականների շորջ:

**Մագդաղիա.** Բնակավայր, որ գտնվում է Տիբերական լճի արևմտյան ափին, Կափառնայումից մի քանի կիլոմետր դեպի հարավ: Մարիամ Մագդաղենացու ծննդավայրը (Մարկ. Ժ 40):

**Մաղաքիա.** Հին Կտակարանի տասներկու փոքր մարզարեներից մեկը, որը հայտնի է նրանով, որ ավետեց Եղիա մարգարեի վերադարձը նոր ժամանակների սկզբին (Մաղաքիա Գ 23):

**Մարկոս.** Հիսուսի քարոզության ժամանակաշրջանում Երուսաղեմում բնակվող մի երիտասարդ, որ ուղեկցեց Պողոս առաքյալին նրա առաջին առաքելության ժամանակ: Քրիստոնեական ա-

վանդությունը նրան համարում է հեղինակ երկրորդ ավետարանի, որ նա գործ է Հոռոմում մեր թվագրության շորջ 65 թվականին հիմնվելով Պետրոս առաքյալի կողմից տրված ուսումնաքի վրա:

**Մարիամ.** Մարկոսի ավետարանի կանացից շատերի անունը.

— Հիսուսի մայր Մարիամը, որի անունը Մարկոսի ավետարանում հիշատակված է մեկ անգամ միայն (Մարկ. Զ 3), բայց նա ավետարանում հանդես է գալիս նաև նետանեթիքի մյուս անդամների մետք՝ իր որդուն փնտրելու համար (Մարկ. Գ 31—35):

— Մարիամ Մագդաղենացին, որը ներկա էր Գողգոթայում (Մարկ. Ժ 40), Հիսուսի գերեզմանում, երբ նրա մարմինը դրվում էր այնտեղ (Մարկ. Ժ 47), դարձալ նրա գերեզմանում, Զատկի առավոտյան (Մարկ. Ժ 2 1):

— Կրտսեր Հակոբոսի և Հովսեի մայր Մարիամը, որը միշտ Մարիամ Մագդաղենացու կողքին էր լինում:

**Մաքսոս.** Հիսուսի տասներկու առաքյալներից մեկը (Մարկ. Գ 18): Քրիստոնեական պահանջությունը նրան համարում է հեղինակ առաջին ավետարանի, որ նա հավանաբար գործել է 80 թվականին Պաղեստինում կամ Սիրիայում:

**Մեսիա.** Բառ, որ ծագում է երրայլեցերենից և նշանակում է «Օծյալ»: Հիսուսի ժամանակաշրջանում Խարայելն սպասում էր մի Մեսիայի՝ արդար և հավատարիմ մի թագավորի, որ պիտի գար ազատագրելու երկիրը և հարգել տալու Աստուծո Օրենքը: Մարկոսը գործածում է այս բարի հումարեն համարժեքը՝ «Քրիստոս»:

**Մովսես.** Ղեկավար, որի առաջնորդությամբ իսրայելացի բազմաթիվ ցեղեր դուրս եկան Եգիպտոսից Ելիք ժամանակ: Նա իր ժողովրդին իր հետ տարավ անապատ, որտեղ և մահացավ՝ Սուրբ Երկիր մտնելուց առաջ: Մովսեսը համարվում է Հին Կտակարանի մեծագույն դեմքերից մեկը, որը հրեա ժողովրդին փոխանցեց Աստուծո Օրենքը:

**Մորիա.** Ալն վայրը, որը գնաց Աքրահամը՝ զոհագործելու համար իր Խարակ որդուն (ըստ ԾԱՅ. ԽԲ 1—19): Հրեական ավանդությունն այդ վայրը նույնացնում է այն բլրի հետ, որի վրա հետագայում կառուցվեց Երուսաղեմի տաճարը:

**Մելոյալ** (ծով). Փակ ծով, որ գտնվում է

Երուսաղեմի հարավ-արևելքում: Երկարությունը 76 կիլոմետր, իսկ լայնությունը՝ 16 կիլոմետր է: 392 մետր ցածրը է Միջերկրական ծովի մակերևութից: Նրա ջուրը չափազանց աղի է, և ծովը փաստորեն զորկ լինելով կենդանական և բուսական կյանքից՝ հոռմայեցիների կողմից կոչվել է «Ասֆալտապատ լիճ»:

**Նաբրոգողոնոտոր.** Բարեկոնի թագավոր (604—562 թ. նախքան Քրիստո), որ գրավեց Երուսաղեմը 587 թվականին և բնակիչներին տեղահան անելով՝ գերեվարեց իր երկիրը: Հին Կտակարանում ան պատկերված է որպես գոռոգության խորհրդանշից, որ հակառակվեց Աստծուն և Խորայելի ժողովրդին: **Նազարեթ.** Փոքր քաղաք Գալիլիայում, Տիբրական լճից 30 կիլոմետր դեպի հարավ-արևմտուք: Այս քաղաքից դուրս եկավ Հիսուս (Մարկ. Ա. 19): Նա կոչվեց «Նազովուեցի», որ նշանակում է Նազարեթի բնակիչ: Սակայն այս քաղաքի է մոտեցնել նաև երրայեցերեն «Նազիր» բառին, որը նշանակում է հաստոկ ոխտով Աստծուն զոհաբերված անձ:

**Նեեմի.** Եղել է Երուսաղեմի կառավարիչ այն տարիներին, երբ քաղաքը վերակառուցվեց հրեաների՝ գերությունից վերադառնալուց հետո (հինգերորդ դար նախքան Քրիստո): Հին Կտակարանի գրքերից մեկը կոչվում է նրա անունով:

**Ներոն.** Հոռոմայեցի կայսր. իշխել է մեր թվագրության 54-ից մինչև 68 թվականը: 64 թվականի հուլիսին, Հոռոմում բռնկված մեծ հրդեհից հետո, նա խիստ հայածանքներ կազմակերպեց քրիստոնյաների դեմ:

**Նոմբ.** Խորայելական հնագույն սրբավայր, որ իր կարևորությունը կորցրեց Դավթի և նրա հաջորդների իշխանության օրոք:

**Շամմազ.** Հրեա (փարիսեցի) նշանավոր ուսքի. ժամանակակից է եղել Հիսուսին և հայտնի է դարձել իր խատակունությամբ, որով հաճախ հակադրվել է ուսքի Հիլլելին (տես Մարկ. Ժ 1—12):

**Ովսե.** Հին Կտակարանի մարգարե (ուժերորդ դար նախքան Քրիստո), որ միաժամանակ եղավ Խորայելի ժողովրդի նկատմամբ Աստուծո գթասրտության պատգամաբներից մեջը:

**Որդի Աստուծո.** Մարկոսի ավետարանում Հիսուսին տրված գլխավոր տիտղոս-

մերից մեկը, որը հանդես է գալիս նենց առաջին նախադասության մեջ (Մարկ. Ա. 1): Այն դրված է նաև հոռմայեցի հարյուրապետի բերանը Հիսուսի խաչելության ժամանակ. «Իրոք այս մարդը Աստուծո Որդի էր» (Մարկ. Ժ 39): Գրքի երկրորդ մասը (Մարկ. Հ 31-ից սկսած) հանգում է այս հայտարության:

**Որդի մարդո.** Արտահայտություն, որ ավետարանիցները բացառապես դեռու են Հիսուսի բերանը՝ մատնանշելու համար նրա անը իր զորության և տկարության մեջ: Մարկոսի ավետարանում այն գործածված է տասնինգա անգամ (տես Մարկ. Բ 1—13 համարների կապակցությամբ տրված բացատրությունները):

**Պետրոս.** Հիսուսի կողմից տրված անուն իր առաքյալներից մեկին, որի սկզբանական անունը եղել է Սիմոն (Մարկ. Գ 16): Մարկոսի ավետարանում ավելի հաճախ է տրվում նրա անունը տասներկու առաքյալների խմբի մեջ: Նահատակվել է Հոռոմում մեր թվագրության 64 կամ 67 թվականին:

**Պիդատոս (Պոնտոս).** Հուդայի հոռոմանական անհանգի փոխարքա մեր թվագրության 26-ից 36 թվականներին: Որպես կայսեր մերկայացուցիչը, փոխարքան համարվում էր իր տօնօրինության տակ գտնվող նահանգի քաղաքական ղեկավարը: Այդ հանգամանքով էլ Պիդատոսը ուղղակիրուեն միջամտություն ցուց տվեց Հիսուսի դատապարտության ժամանակ մեր թվագրության 30 թվականին:

**Պողոս.** Սկզբանական Եկեղեցու ամենաերեւելի դեմքերից մեկը, թեև նա մաս չէր կազմում տասներկու առաքյալների խմբին: Պողոսը հրեա էր, փարիսեցի և սկզբում հալածում էր քրիստոնյաներին, սակայն հետո, մեր թվագրության 36 կամ 37 թվականին, այսինքն՝ Հիսուսի մահից վեց-յոթ տարի անց, հենց ինքը դարձավ քրիստոնյա և հիմնեց բազմաթիվ քրիստոնեական համայնքներ, իսկ որից շատ համայնքների էլ այցելություններ տվեց: Նա հրանց գրեց բազմաթիվ համակեր կամ թղթեր, որոնք մաս են կազմում Նոր Կտակարանին: Նահատակվեց Հոռոմում 64 կամ 67 թվականին:

**Սաղմոս.** Աստվածաշնչական աղոթք, որ անկասկած ունի ծիսական ծագում: Հին Կտակարանը պարունակում է

հարյուր հիսուն սաղմոսներից բաղկացած մի ժողովածու, որոնցից հնագույնները վերագրվում են Դավիթ թագավորին:

**Սամվել.** Մարգարե և դատավոր Խորայելի, որ հաստատեց Խորայելի թագավորությունը՝ գահ բարձրացնելով և ամրող ժողովրդի վրա թագավոր հոչակերով հայու Սավորին և ապա՝ Դավիթին: Աստվածաշնչում երկու գրքեր տալիս են իրադարձություններով հարուստ այդ ժամանակաշրջանի պատմությունը և կոչվում են «Սամվելի գրքեր»:

**Սավոր.** Խորայելի առաջին թագավոր, որ իշխան Դավիթից անմիջապես առաջ: Աստվածաշնչում նրա իշխանությունը համարվում է գահակալության ձախողված մի փորձ, մինչեւն նրա հաջորդի իշխանությունը հաջողություն եղավ:

**Սատանա.** Երրայեցերեն բառ, որ նշանակում է «հակառակորդ»: Դա դեռի իշխանի աստվածաշնչական անուններից մեկն է:

**Սիդոն.** Փյունիկյան հավահանգիստ Միջերկրական ծովի ափին, Տյուրու քաղաքից դեպի հյուսիս: Սիդոնի շրջանը գտնվում է Հրեաստանի սահմաններից դուրս:

**Սիմոն.** Մարկոսի ավետարանում այս անունով են կոչվում բազմաթիվ անձինք. — Սիմոն-Պետրոս. տաներկու առաքյալների ցուցակում առաջին անունը (Մարկ. Գ 16):

— Սիմոն Կանանցի. մի ուրիշ առաքյալ (Մարկ. Գ 18): Սրան թերևս պետք է նոյնացնել այն Սիմոնի հետ, որի անունը Մարկոսը տալիս է Հիսուսի եղբայրների ցուցակում (տես Մարկ. Զ 3):

— Բորոտ Սիմոն. այն անձը, որի տանը, Բեթանիայում, Հիսուս սեղան նստեց (Մարկ. Ժ 7 3):

— Սիմոն Կյուրենացի. Հիսուսի խաչափայտը տանող անձը (Մարկ. Ժ 21):

**Սինա.** Եռանկյունաձև անապատային թերակղի, որ գտնվում է Եգիպտոսի և Պաղեստինի միջև: Հստ հրեական ավանդության, այս թերակղու հարավային մասում բարձրացող մի լեռան վրա է, որ Աստված Մովսեսին տվեց իր Օրենքը:

**Սիոն.** Այն բլուրներից մեկը, որի վրա կառուցվել է Երուսաղեմ: Սիոն անունը գործածվում է Երբեմն՝ ցուց տալու համար ամրող քաղաքը:

**Սողոմոն.**

— Գողգոյաթում ներկա եղող երեք կանացից մեկը (Մարկ. Ժ 40), որը կիրակի օրը, առավոտյան, մյուս երկու կանաց հետ, գնացել էր Հիսուսի գերեզմանը (Մարկ. Ժ 1):

— Այս անունն ուներ նոյնապես Հերովդիայի դուստրը, բայց նոր Կտակարանում նրա անունը չի հիշատակված (Մարկ. Զ 22): Նա պարեց Հերովդիս Անտիպասի առջև և նրանց ովեց Հովհաննես Մկրտչի գլուխը՝ սկսունդի վրա դրված:

**Սողոմոն.** Դավիթ թագավորի որդին, որը, իր մահից հետո, ժառանգեց նրա զարդ և իշխան Խորայելի վրա 970 թվականից մինչև 931 թվականը Քրիստոսից առաջ: Նա կառուցել տվեց Երուսաղեմի հոչակավոր տաճարը: Նրա մահից հետո թագավորությունը բաժանվեց Երկուսի՝ Խորայելը հյուսիսում և Հովհայի Երկիրը՝ հարավում:

**Տաղավարաթարաց** (տուն). Հրեական տուն, որ տեղի էր ունենում աշնանը, այգեկութիւն ժամանակ, և հիշեցնում էր անապատային ազատ կյանքը Ելքի օրերին: Այս տունը Երրայեցերեն կոչվում է հայ Սովկոս:

**Տիբերական** (լիճ). Տես Գալիլիայի (ծով) բառահորդվածը:

**Տյուրոս.** Փյունիկյան մեծ հավահանգիստ Միջերկրական ծովի ափին, Պաղեստինի հյուսիսում: Տյուրոսի շրջանը գտնվում է Հրեաստանի սահմաններից դուրս:

**Փիլիպպոս.** Մարկոսի ավետարանում այս անունով են կոչվում երկու անձեր.

— Փիլիպպոս. Հիսուսի տաներկու առաքյալներից մեկը (Մարկ. Գ 18):

— Փիլիպպոս. Մեծն Հերովդեսի որդին և Հերովդես Անտիպասի եղբայրը, որը Հերովդիայի առաջին ամուսինը եղավ (Մարկ. Զ 17):

**Քրիստոս.** Այս բառն առաջացել է հունարենից, համարժեք է Երրայեցերեն «Մեսիա» բառին, որ նշանակում է «Օծալ»: Մարկոսը իր գրքի հենց ըսկզբից Հիսուսին ներկայացնում է որպես Քրիստոս (Մարկ. Ա 1): Նրա երկի ամրող առաջին մասը Պետրոս առաքյալն ըերում է այն համոզման, որ նա իրոք այդախին է. «Դու Քրիստոսըն ես» (Մարկ. Լ 29):

**Ֆրանսերենից թարգմանեց**

ՊԱՐԳԵՎ ԾԱՀԱՍՁՅԱՆԸ